# Արձանագրություն N 5

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կարիքների համար <<Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների>> ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«20» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդուլյան** ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Անահիտ Ավագյանը՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02» ծածկագրով ընթացակարգի ող գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

Միաժամանակյա բանակցություններին ներկա է գտնվել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ -ն:
Միաժամանակյա բանակցություններին ներկա չի գտնվել «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ -ն:

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա մասնակցի կողմից առաջարկված գինն է.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքն արժեք | Շա հույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 2 | Հոտազերծիչ, օդի | 105062.5 | 21012.5 | 126075 | 25215 | 151290 |

**2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

2.1. 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին.

2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2. 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ –ին:

5-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

3.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:

3.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2016 թվականի հոկտեմբերի 26-ը ներառյալ ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ կիրավիրել 2016 թվականի հոկտեմբերի 28-ին, ժամը՝ 10:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

______________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

______________ Աղավնի Բուդոյան

______________ Կարեն Մելքոնյան

______________ Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

______________ Մարիամ Հայրապետյան